Գեզագարդ

Ազդող նյութը՝ պրոմետրին 500 գ/լ
Փաթեթավորումը՝ 5 լ պոլիէթիլենային տարա
Պատրաստուկային ձևը՝ խտացված կախույթ կամ թրջվող փոշի
Արտադրող ֆիրման (երկիրը)՝ Սինգենտա (Շվեյցարիա)

Գեզագարդը կարտոֆիլի, բանջարեղենի, տեխնիկական և այլ մշակաբույսերի դաշերում միամյա երկշաքիլ և հացազգի մոլախոտերի դեմ պայքարի գերազանց հերբիցիդ է

Հատկությունները

- միամյա երկշաքիլ և հացազգի մոլախոտերի վրա արդյունավետ ազդեցություն
- պաշտպանվող մշակաբույսերի լայն շրջանակ
- ցանքաշրջանառությունների դեպքում հաջորդող մշակաբույսերի վրա ազդեցության բացակայություն
- պաշտպանող ազդեցության երկարատևություն:

Առավելությունները

- ճանաչում վայելող, ժամանակի փորձությունը անցած մոլախոտասպան
- տնտեսական արդյունավետության ապահովում
- գերազանց արդյունք դժվար ոչնչացվող մոլախոտերի դեմ պայքարում
- վեգետացիայի ընթացքում հողի մեջ ամբողջովին քայքայում:

Համատեղելիությունը

- պատրաստուկը համատեղելի է շատ պեստիցիդների հետ, սակայն խորհուրդ է տրվում անցկացնել համատեղելիության նախնական ստուգում

Ազդեցության արագությունը

- մինչծլային փուլում հերբիցիդի օգտագործումը կանխարգելում է մոլախոտերի ծլումը, հետծլային շրջանում մոլախոտերը ոչնչանում են 4-7 օրվա ընթացքում:

Ֆիտոտոքսիկությունը

- բացակայում է ստորև բերված օգտագործման չափաքանակների խստիվ պահպանման դեպքում:

Պատրաստուկի օգտագործմանն առաջարկվող չափաքանակներ

Մշակա-բույսի անվանումը	*Մոլախոտեր*	*Պատրաստու-կի ծախսի քանակը լ/հա*	*Աշխատան-քային հեղուկի ծախսը լ/հա*	*Սրսկման ժամկետները*	*Սպասման ժամկետը (բուժումների առավելագույն քանակը)*
Կարտոֆիլ	միամյա երկշաքիլ և հացազգի	2.0-3.5	200-300	սրսկումը կատարել մշակաբույսի նախածլային փուլում	20/1
Սոյա		2.5-3.5			-(-)
Ոլոռ		2.5-3.0			
Արևածաղիկ		2.0-3.5		միաժամանակ ցանքի ընթացքում կամ ծլելուց առաջ (բերքահավաքից 60 օր առաջ)	-/1
Գազար		1.5-3.0		ցանքից առաջ, մինչծլային փուլում, ծլելուց հետո 2 իսկական տերևի փուլում	40/1
Լոբի		3.0		մշակաբույսի ծլելուց 2-3 օր առաջ կամ 1-2 տերևների առկայության դեպքում	-/1
Կանաչեղեն		2.0-3.0		սրսկումը կատարել մշակաբույսի նախածլային փուլում կամ մշակաբույսի 1-2 իսկական տերև փուլում	28(1)